ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԱԾ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(առ 08.01.2020 - 07.06.2024 թթ.)

Ուղեցույցում ներկայացվում է համառոտ և դասակարգված տեղեկատվություն Սահմանադրական դատարանի ընդունած որոշումների վերաբերյալ ըստ հետևյալ բաժինների՝

- ՀՀ օրենքներ և այլ իրավական ակտեր
- Իրավական ակտի վիճարկվող դրույթներ և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված (ՀԱՓ) դրույթներ
- ՍԴ որոշման եզրափակիչ մաս
- ՍԴ որոշման ընդունման ամսաթիվ
- ՍԴ որոշման հրապարակման ամսաթիվ

* Ուղեցույցը կազմվել է ՀՀ սահմանադրական դատարանի տեղեկատվական և ծրագրային ապահովման բաժնի կողմից

N	ՀՀ օրենքներ և այլ իրավական ակտեր	Իրավական ակտի վիճարկվող դրույթներ	ՍԴ որոշման եզրափակիչ մաս	ՍԴ որոշման ընդունման ամսաթիվ	ՍԴ որոշման հրապարակման ամսաթիվ
1.	**«Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է 11.04.2003թ.)***	26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ 26-րդ հոդվածի 3-րդ մաս (մինչև 2021 թվականի մարտի 25-ին ընդունված ՀՕ-131-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ)	**1.** «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը (մինչև 2021 թվականի մարտի 25-ին ընդունված ՀՕ-131-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) համապատասխանում է Սահմանադրությանը: **2.** «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասը (մինչև 2021 թվականի մարտի 25-ին ընդունված Օ-131-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) այնքանով, որքանով ազգային անվտանգության մարմինների ծառայողի նկատմամբ քրեական գործ հարուցված լինելու փաստի հիմքով կադրերի տրամադրության տակ թողնվելու արդյունքում տվյալ ժամանակահատվածում ծառայողը զրկվում է դրամական ապահովում ստանալու հնարավորությունից, ճանաչել Սահմանադրության 49-րդ և 75-րդ հոդվածներին **հակասող և անվավեր:**	21 նոյեմբերի 2023 թվականի ՍԴՈ-1704	24 նոյեմբերի 2023թ.
		43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ	**1.** «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ կրոնական կազմակերպության անդամ լինելու արգելքի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:	11 ապրիլի 2023 թվականի ՍԴՈ-1683	14 ապրիլի 2023թ.

			5. «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ազգային անվտանգության մարմինների ծառայողի՝ արհեստակցական կազմակերպության անդամ լինելու բացարձակ արգելքի մասով, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին **հակասող**: **7**. Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին և 19-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2023 թվականի նոյեմբերի 11-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները		

			համապատասխանեցնելու սույն որոշմանը:		
2.	**«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենք** ***(ընդունվել է 16.12.2016թ.)***	8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ, 138-րդ հոդված	**1.**«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի՝ իրեն վերապահված պաշտոններում թեկնածուներ առաջադրելն իրավասու խմբակցության ոչ թե իրավունքն է, այլ պարտադիր լիազորությունը: **2.**«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 5-րդ մասն այնքանով, որքանով նախատեսում է Ազգային ժողովի խմբակցությունների կողմից մշտական հանձնաժողովների նախագահների և նրանց տեղակալների պաշտոններում թեկնածուների առաջադրման իրավունքը որոշելուց հետո փոխհամաձայնությամբ մշտական հանձնաժողովի նախագահի կամ նրա տեղակալի պաշտոնում թեկնածու առաջադրելու իրենց իրավունքը միմյանց զիջելու հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին **հակասող**: **3.**«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 138-րդ հոդվածի 12-րդ մասը ճանաչել Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին **հակասող**: **4.**Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտու-	19 դեկտեմբերի 2023 թվականի ՍԴՈ-1708	22 դեկտեմբերի 2023թ.

			թյունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին և 19-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2024 թվականի մայիսի 31-ը՝ հնարավորություն ընձեռելով Ազգային ժողովին՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի իրավակարգավորումները ամապատասխանեցնելու սույն որոշմանը:		
		52-րդ հոդվածի 2-րդ մաս, 3-րդ մաս, 4-րդ մաս և 7-րդ մաս	**1**.«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասը, 3-րդ մասի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերը, 4-րդ մասը և 7-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը: **2.**«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դրանցով սահմանված ժամկետներում պատգամավորին Ազգային ժողովի նիստերի դահլիճում ներկա լինելու իրավունքից զրկելը չի կարող արգելք հանդիսանալ այդ պատգամավորի կողմից Ազգային ժողովի նիստերում քվեարկություններին մասնակցության համար:	1 փետրվարի 2022 թվականի ՍԴՈ-1627	4 փետրվարի 2022թ.
		86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ	**1.**«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրա-կան օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ	29 ապրիլի 2021 թվականի	3 մայիսի 2021թ.

		մասեր, 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4.2-րդ կետ	մասի 4.2-րդ կետը, 86-րդ հոդվածի 2-րդ և 7-րդ մասերը համապատաս-խանում են Սահմանադրությանը:	ՍԴՈ-1590	
		121-րդ հոդվածի 2-րդ մաս	**1**.«Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 121-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	11 հոկտեմբերի 2022 թվականի ՍԴՈ-1666	14 հոկտեմբերի 2022թ.
3.	**«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենք** ***ընդունվել է 05.12.2000թ.)***	**6-րդ հոդվածի 5-րդ մաս**	**3.** «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասն այնքանով, որքանով Հայաստանի Հանրապետության զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և Սահմանադրական դատարանի դատավորների համար սահմանում է արհեստակցական կազմակերպության մասնակից լինելու բացարձակ արգելք, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին հակասող: **7.** Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին և 19-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2023 թվականի նոյեմբերի 11-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին՝ «Ոստիկանությունում	11 ապրիլի 2023 թվականի ՍԴՈ-1683	14 ապրիլի 2023թ.

			ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշմանը:		
4.	**«Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է 22.01.2020թ.)***	1-ին հոդված	**2.** Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված՝ «Բանկային գաղտնիքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75, 78 և 79-րդ հոդվածներին ***հակասող:***	18 հունիսի 2020 թվականի ՍԴՈ-1546	22 հունիսի 2020թ.
5.	**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է 04.03.1996թ.)***	7-րդ հոդվածի 3-րդ մաս, 8-րդ հոդվածի 3 և 4-րդ մասեր, 17-րդ հոդվածի 2-րդ մաս, 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	**1.**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը, 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերն այնքանով, որքանով չեն ապահովում անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց պատշաճ մասնակցությունն իրենց նկատմամբ իրականացվող բժշկական միջամտություններին՝ չսահմանելով իրազեկված համաձայնություն ստանալու պահանջ, ինչպես նաև չեն ապահովում նշված անձանց՝ իրենց վերաբերյալ բժշկական տեղեկությունների մատչելիության իրավունքը, ճանաչել	30 հունվարի 2020 թվականի ՍԴՈ-1504	1 փետրվարի 2020թ.

			Սահմանադրության 25-րդ հոդվածին ***հակասող***: **4.**«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը և 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը հավաստելու, ինչպես նաև անձին իր առողջությանը վերաբերող հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկերի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին տեղեկացնելու մասերով անձի համաձայնությունն ստանալը պետք է լինի նախապատվելի: **6.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման հրապարակման պահին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը, 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ մասը և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի		

			32-րդ հոդվածի 2-րդ մասը Սահմանադրությանը ***հակասող և անվավեր*** ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության և հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին վիճարկվող դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման այնպիսի բաց, որը խոչընդոտ կդառնա անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց բժշկական օգնության և սպասարկման համար, սույն որոշմամբ Սահմանադրությանը ***հակասող*** ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի հունիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Հոգեբուժական օգնության մասին» և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:		
		41-րդ հոդվածի 3-րդ մաս	1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	25 ապրիլի 2023 թվականի ՍԴՈ-1685	27 ապրիլի 2023թ.
6.	**«Բնապահպա-նական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք**	18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերություն (2017 թվականի հունվարի 27-ի	**2.** 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ուժը կորցրել է) 18-րդ հոդվածի 2-րդ մասի երրորդ պարբերությունը համապատասխանում է Սահմանադրությանը:	12 մայիսի 2020 թվականի ՍԴՈ-1530	14 մայիսի 2020թ.

	(ընդունվել է 28.12.1998թ., ուժը կորցրած է ճանաչվել 01.01.2018թ.)	խմբագրությամբ)			
7.	**«Գնումների մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է 16.12.2016թ.)***	15-րդ հոդվածի 2-րդ մաս	**1**. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	27 սեպտեմբերի 2022 թվականի ՍԴՈ-1661	30 սեպտեմբերի 2022թ.
8.	**«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է 14.04.1999թ.)***	40-րդ հոդվածի 1-ին մաս	**2.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ գրավ դրված գույքի՝ արտադատական կարգով բռնագանձման արդյունքում գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին պետք է ներկայացվի նաև գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու վերաբերյալ գրավառուի հստակ կամահայտնությունն արտահայտող բռնագանձման ծանուցումը հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման	15 նոյեմբերի 2022 թվականի ՍԴՈ-1668	18 նոյեմբերի 2022թ.

			մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:		
		40-րդ հոդվածի 2-րդ մաս	**1**. «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ նշված դրույթի իմաստով՝ ծանուցման փոստային առաքման անդորրագիրը փոստային առաքման գործընթա-ցում կազմվող այն փաստաթուղթն է կամ փաստաթղթերի համակցությունը (անկախ փոստային առաքման շրջանակում տվյալ փաստաթղթին տրված անվանումից), որը հնարավորություն է տալիս հաստատել բռնագանձման ծանուցումը գրավատուին հանձնված լինելու հանգամանքը և այն հանձնելու օրը: **2**. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:	1 նոյեմբերի 2022 թվականի ՍԴՈ-1667	4 նոյեմբերի 2022թ.
9.	**«Երեխայի**	32-րդ հոդվածի	**3.** «Երեխայի իրավունքների մասին»	30 հունվարի	1 փետրվարի

	իրավունքների մասին» **ՀՀ օրենք** ***(ընդունվել է 29.05.1996թ.)***	2-րդ մաս	Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով որ չի ամրագրում երեխային հոգեբուժական հաստատություն հոսպիտալացնելիս վերջինիս համաձայնության պարտադիր լինելն այն դեպքերում, եթե երեխայի տարիքը և հոգեկան առողջությունը թույլ են տալիս, որ վերջինս արտահայտի իր կամքը, ճանաչել Սահմանադրության 25-րդ և 37-րդ հոդվածներին ***հակասող***: **6.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման հրապարակման պահին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը, 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ մասը և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը Սահմանադրությանը ***հակասող և անվավեր*** ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության և հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին վիճարկվող դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման այնպիսի	2020 թվականի ՍԴՈ-1504	2020թ.

			բաց, որը խոչընդոտ կդառնա անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց բժշկական օգնության և սպասարկման համար, սույն որոշմամբ Սահմանադրությանը ***հակասող*** ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի հունիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Հոգեբուժական օգնության մասին» և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների վերաբերելի իրավակարգավո-րումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:		
10.	**Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենք** ***(ընդունվել է 15.11.2017թ.)***	40-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	2 նոյեմբերի 2021 թվականի ՍԴՈ-1616	5 նոյեմբերի 2021թ.
		8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	**2**. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ զինծառայողի՝ կրոնական միավորումներ ստեղծելու արգելքի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը: **6.** «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ զինծառայողի՝ արհեստակցական միության անդամ լինելու բացարձակ արգելքի մասով,	11 ապրիլի 2023 թվականի ՍԴՈ-1683	14 ապրիլի 2023թ.

			ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին **հակասող:** **7.** Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին և 19-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2023 թվականի նոյեմբերի 11-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավո-րումները համապատասխանեցնելու սույն որոշմանը:		
11.	**«Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կար-գով պատասխա-նատու ճանաչված**		**4.** ՀՀ կառավարության 2009 թվականի հուլիսի 23-ի «Կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար՝ սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու	30 նոյեմբերի 2021 թվականի ՍԴՈ-1618	3 դեկտեմբերի 2021թ.

	իրավաբանական անձի լուծարման կամ սնանկ ճանաչման դեպքում համապատասխան վճարների կապիտալացման և դրանք տուժողին վճարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության թիվ 914 որոշում ***(ընդունվել է 23.07.2009թ.)***		մասին» թիվ 914-Ն որոշմամբ ամրագրված իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրությանը:		
12.	**«Հիմնադրամների մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է 26.12.2002թ.)***	23-րդ հոդվածի 7-րդ մաս	**1.**«Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին, 2-րդ պարբերությունները, 3-րդ պարբերության 1-ին կետը համապատասխանում են Սահմանադրությանը: **2.** «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդ-վածի 7-րդ մասի 3-րդ պարբերության 2-րդ կետը և 4-րդ պարբերությունը՝ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների լուծարման համար դատարան դիմելու լիազորության մասով, ճանաչել Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասին, 78-րդ հոդվածին **հակասող և անվավեր:**	22 փետրվարի 2022 թվականի ՍԴՈ-1629	25 փետրվարի 2022թ.
13.	**ՀՀ ամուսնության և ընտանիքի օրենսգիրք** ***(ուժի մեջ է մտել***	40-րդ հոդված	**1.** Հայաստանի Հանրապետության ամուսնության և ընտանիքի օրենսգրքի (ուժը կորցրել է 2005 թվականի ապրիլի 19-ին) 40-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ ամուսնու կարգավիճակը	26 դեկտեմբերի 2022 թվականի ՍԴՈ-1675	29 դեկտեմբերի 2022թ.

	01.01.1970թ. ուժը կորցրած է ճանաչվել 19.04.2005թ.)		վարչական դատավարությունում հայցվորի համար ինքնին «շահագրգիռ անձի» անփոփոխ կարգավիճակ չի երաշխավորում, եթե գործի փաստական հանգամանքները կամ կիրառելի իրավունքը բացառում է այն: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է օրենքով սահմանված կարգով վերանայման:		
14.	**ՀՀ աշխատանքային օրենսգիրք** ***(ընդունվել է 09.11.2004թ.)***	7-րդ հոդվածի 7-րդ մաս	1. Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 7-րդ հոդվածի 7-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի դրույթները չեն տարածվում պետական վարչական պաշտոնում նշանակման և այդ պաշտոնից ազատման իրավահարաբերությունների նկատմամբ:	27 փետրվարի 2024 թվականի ՍԴՈ-1716	1 մարտի 2024թ.
		236-րդ հոդված	**2.** ՀՀ աշխատանքային օրենսգրքի 236-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:	30 նոյեմբերի 2021 թվականի ՍԴՈ-1618	3 դեկտեմբերի 2021թ.
15.	**Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին ՀՀ օրենք** ***(ընդունվել է***	20.1-ին հոդվածի 3-րդ մաս 22-րդ հոդվածի 3-րդ պարբերություն	**1.** «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասը, 22-րդ հոդվածի 3-րդ պարբերությունը համապատասխանում են Սահմանադրությանը:	23 դեկտեմբերի 2021 թվականի ՍԴՈ-1621	27 դեկտեմբերի 2021թ.

	16.11.1992թ.)				
16.	**«ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք** ***(ընդունվել է 07.02.2018թ.)***	9-րդ հոդված	**1.** «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:	16 մարտի 2021 թվականի ՍԴՈ-1585	18 մարտի 2021թ.
		35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասություն	**1.** «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ նշանակված անձը, որի լիազորությունները դադարել են պալատի վերացման հիմքով (անկախ որպես պալատի նախագահ նրա պաշտոնավարման ժամկետից), չի կարող նշանակվել Վճռաբեկ դատարանի որևէ պալատի նախագահ:	2 հունիսի 2023 թվականի ՍԴՈ-1691	5 հունիսի 2023թ.
		80-րդ հոդվածի 9-րդ մաս և 86-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 80-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը: **2**. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	6 մայիսի 2022 թվականի ՍԴՈ-1650	10 մայիսի 2022թ.
		81-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	31 մարտի 2020 թվականի ՍԴՈ-1518	1 ապրիլի 2020թ.
		90-րդ հոդվածի 6-րդ մաս	**1.** «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ	21 մայիսի 2024 թվականի ՍԴՈ-1729	24 մայիսի 2024թ.

			հոդվածի 6-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ «արդարադատության շահ» ձևակերպումը վերաբերում է Բարձրագույն դատական խորհրդում քննվող կոնկրետ կարգապահական գործով արդարադատության արդյունավետ և անխոչընդոտ իրականացմանը: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ «Հայաստանի Հան-րապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասը և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը Դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման մեջ նշված մեկնաբանություններից տարբերվող մեկնաբանու-թյուններով:		
		94-րդ հոդվածի 5-րդ մաս և 109-րդ հոդվածի 4-րդ մաս	**1.**«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 5-րդ մասը և 109-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը:	10 հունիսի 2021 թվականի ՍԴՈ-1598	14 հունիսի 2021թ.
		145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:	17 հունվարի 2024 թվականի ՍԴՈ-1709	22 հունվարի 2024թ.
17.	**«ՀՀ դատական**		**1.** Ազգային ժողովի կողմից 2021 թվականի	15 հունիսի	17 հունիսի

	օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենք ***(ընդունվել է 03.02.2021թ.)***		փետրվարի 3-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը և «Արդարադատության ակադեմիայի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» օրենքը համապատասխանում են Սահմանադրությանը:	2021 թվականի ՍԴՈ-1603	2021թ.
18.	**ՀՀ ընտանեկան օրենսգրք** **(*ընդունվել է 09.11.2004թ.)***	21-րդ հոդվածի «դ» կետ	**1.** Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 21-րդ հոդվածի «դ» կետը համապատասխանում է Սահմանադրությանը:	12 փետրվարի 2021 թվականի ՍԴՈ-1576	15 փետրվարի 2021թ.
19.	**«ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենք** **(*ընդունվել է 25.05.2016թ.)***	90-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը Սահմանադրական դատարանի հետևյալ մեկնաբանությամբ, որ՝ **Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուի՝ մինչև պատգամավորի լիազորություններն ստանձնելն ընտրված պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում համաձայնություն տալու հարցի քննության և լուծման գործընթացում այդ անձանց ընտրվելու իրավունքի արդյունավետ պաշտպանության ապահովման առումով անհրաժեշտ է, որ՝** **ա) երաշխավորվի տվյալ գործընթացին անձի մասնակցությունը,** **բ) ապահովվի անձի լսված լինելու**	22 մարտի 2022 թվականի ՍԴՈ-1644	25 մարտի 2022թ.

			իրավունքը, **գ) անձին ընձեռվի ընտրվելու իր իրավունքի սահմանափակումը հիմնավորող փաստաթղթերին և նյութերին ծանոթանալու, հարցեր տալու, առարկություններ ներկայացնելու, բացատրություններ տալու և միջնորդություններ ներկայացնելու հնարավորություն:**		
20.	**ՀՀ հարկային օրենսգիրք** ***(ընդունվել է 04.10.2016թ.)***	4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետ	**1.** Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետի առաջին նախադասությունը համապատասխանում է Սահմանադրությանը: **2.**Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետի երկրորդ նախադասությունն այն մասով, որը նախատեսում է հարկ վճարողների էլեկտրոնային փոստի հասցեին պարտադիր ծանուցման ենթակա փաստաթուղթն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից ուժի մեջ մտնելու պահանջ՝ առանց այն ստանալու մասին էլեկտրոնային հավաստման, ճանաչել Սահմանադրության 50-րդ հոդվածին ***հակասող***: **3.** Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, ելնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 19-րդ մասի պահանջներից, հաշվի առնելով, որ սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 66-րդ կետի երկրորդ նախադասության՝ Սահմանադրական	12 մայիսի 2020 թվականի ՍԴՈ-1529	14 մայիսի 2020թ.

			դատարանի որոշման հրապարակման պահին Սահմանադրությանը ***հակասող*** ճանաչելը հարկային վարչարարության շրջանակում անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության կամ հանրության համար, որոնք կխաթարեն վերոհիշյալ դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Սահմանադրությանը ***հակասող*** ճանաչված դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի հուլիսի 31-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին վիճարկվող իրավակարգավորումը համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:		
		416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ	**1.** Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:	19 փետրվարի 2021 թվականի ՍԴՈ-1577	22 փետրվարի 2021թ.
21.	**«ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է 11.04.2005թ.)***	16.1-ին հոդվածի 1-ին մաս	**2.**«Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16.1-ին հոդվածի 1-ին մասը՝ մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը ոստիկանության ծառայողի նոր պաշտոնի նշանակվելու բացարձակ արգելք, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ ոստիկանության ծառայությունից ազատվելու արգելք նախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 29, 49, 66 և 78-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***:	25 փետրվարի 2020 թվականի ՍԴՈ-1507	27 փետրվարի 2020թ.
22.	**«ՀՀ-ում ռազմական դրություն հայտարարելու**	9.1-ին և 9.2-րդ կետեր	**1**. Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշման հավելվածի 9.1-ին կետի՝ «դրանց	4 մայիսի 2021 թվականի ՍԴՈ-1592	7 մայիսի 2021թ.

	մասին» Կառավարության թիվ 1586-ն որոշում ***(ընդունվել է 27.09.2020թ.)***		արդյունավետությունը կասկածի տակ դնող կամ որևէ այլ կերպ արժեզրկող» բառակապակցությունը ճանաչել Սահմանադրության 42-րդ և 79-րդ հոդվածներին **<u>հակասող և անվավեր:</u>** **2**. Կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ռազմական դրություն հայտարարելու մասին» թիվ 1586-Ն որոշման հավելվածի 9.2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:		
23.	**«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է 17.05.2000թ.)***	1-ին հոդվածի 4-րդ մաս (2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ)	**1.** 2017 թվականի հունվարի 27-ի խմբագրությամբ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքի 1-ին հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	12 մայիսի 2020 թվականի ՍԴՈ-1530	14 մայիսի 2020թ.
24.	**ՀՀ վարչական դատավարության օրենսգիրք** ***(ընդունվել է 05.12.2013թ.)***	3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	**2.** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի՝ Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 2–4-րդ կետերով ամրագրված լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումները դատական կարգով բողոքարկման ենթակա չեն:	2 հունիսի 2023 թվականի ՍԴՈ-1691	5 հունիսի 2023թ.
		3-րդ հոդվածի 1.2-րդ մաս, 79-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ	**1**. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.2-րդ մասը և 79-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը համապատասխանում են Սահմանադրությանը:	31 մայիսի 2022 թվականի ՍԴՈ-1654	3 հունիսի 2022թ.

		կետ			
		3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ, 29-րդ գլուխ	**1**.Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 29-րդ գլուխը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 223-րդ հոդվածը համապատասխանում են Սահմանադրությանը:	23 փետրվարի 2021 թվականի ՍԴՈ-1578	25 փետրվարի 2021թ.
		101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ	**2.** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ դատավորի նկատմամբ կար-գապահական վարույթի շրջանակներում «դատական նիստերի դահլիճից հեռացում» դատական սանկցիան կարող է կիրառվել այն պայմաններում, երբ Բարձրագույն դատական խորհուրդը կգործադրի բոլոր հնարավոր և անհրաժեշտ ջանքերը՝ դահլիճից հեռացվող դատավորի լսված լինելու իրավունքն ապահովելու համար: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով՝ նկատի ունենալով, որ «Հայաստանի Հան-րապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի 6-րդ մասը և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը Դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշման մեջ նշված	21 մայիսի 2024 թվականի ՍԴՈ-1729	24 մայիսի 2024թ.

			մեկնաբանություններից տարբերվող մեկնաբանու-թյուններով:		
		124-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ «Վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում» դրույթը, նոր ապացույց ներկայացնելու առումով, կաշկանդում է միայն վիճարկվող ակտը կայացրած վարչական մարմնին: **2.**«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 2-րդ մասի «Վիճարկվող վարչական ակտի իրավաչափությունը որոշվում է այդ ակտի ընդունմանն ուղղված վարչական վարույթում ձեռք բերված ապացույցների շրջանակում» դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման առաջին կետում տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:	1 դեկտեմբերի 2020 թվականի ՍԴՈ-1565	3 դեկտեմբերի 2020թ.
		131-րդ հոդվածի 1-ին մաս	**1.**Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրու-թյանը:	16 ապրիլի 2024 թվականի ՍԴՈ-1725	18 ապրիլի 2024թ.
		145-րդ հոդվածի	**1.** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին	2 մարտի 2021 թվականի	3 մարտի 2021թ.

		1-ին մաս	մասն այնքանով, որքանով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանին լիազորություն չի վերապահում բավարարելու վերաքննիչ բողոքը՝ փոփոխելով վճռի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին, ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին ***<u>հակասող և անվավեր</u>***:	ՍԴՈ-1579	
		184-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	**1.** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ Սահմանադրության 61 և 81-րդ հոդվածների բովանդակությունից ելնելով՝ դատավարության մասնակցի իրավահաջորդի կողմից նոր հանգամանքով դատական ակտի վերանայման դիմումը ենթակա է քննության վեճի լուծման արդյունքով ծագող նյութական իրավունքների մասով նրա իրավահաջորդությունը ամբողջ ծավալով բացառող հանգամանքների բացակայության դեպքում: **2.** Դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտով՝ Վճռաբեկ դատարանի՝ 2023 թվականի հունիսի 30-ի թիվ ՎԴ/4264/05/11 որոշմամբ կիրառված Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը Դիմողների նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ինչը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի ուժով հիմք է Դիմողների նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու	9 ապրիլի 2024 թվականի ՍԴՈ-1724	12 ապրիլի 2024 թ.

			հիմքով վերանայման համար:		
		195-րդ հոդված	**2.** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 195-րդ հոդվածն այնքանով, որքանով չի նախատեսում վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (դրա վիճարկվող դրույթի) գործողությունը կասեցնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը վերաքննության կարգով անմիջական բողոքարկման հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին ***հակասող և անվավեր***: **3**. Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասը՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:	16 ապրիլի 2024 թվականի ՍԴՈ-1725	18 ապրիլի 2024թ.
25.	**ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք** ***(ընդունվել է 09.02.2018թ.)***	5-րդ հոդվածի 3-րդ մաս, 10-րդ հոդվածի 2-րդ մաս, 388-րդ հոդվածի 1-ին մաս, 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ, 415-րդ հոդվածի 1-ին մաս և 423-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը, 10-րդ հոդվածի 2-րդ մասը, 388-րդ հոդվածի 1-ին մասը, 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 423-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը: **2.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով բացառում է վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած, սակայն բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերի վերանայումը նոր հանգամանքներով, ճանաչել Սահմանադրության 61-րդ և 75-րդ հոդվածներին **հակասող և**	27 հունվարի 2021 թվականի ՍԴՈ-1573	1 փետրվարի 2021թ.

			անվավեր:		
		6-րդ և 9-րդ հոդվածներ	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածները համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանմամբ, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու որոշումը՝ դրա հիմքում դրված եզրահանգման հետ մեկտեղ, պետք է պարունակի նաև դրան հանգեցրած պատճառաբանությունը: **2.**«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 6-րդ և 9-րդ հոդվածները դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:	1 փետրվարի 2022 թվականի ՍԴՈ-1628	4 փետրվարի 2022 թ.
		49-րդ հոդվածի 5-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:	26 հունվարի 2021 թվականի ՍԴՈ-1572	29 հունվարի 2021թ.
		95-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «(...) կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման)	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «(...) կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին» դրույթը, ճանաչել Սահմանադրության 61 և 63-րդ	2 փետրվարի 2021 թվականի ՍԴՈ-1574	5 փետրվարի 2021թ.

		հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին» դրույթ	հոդվածների 1-ին մասերին, 75-րդ հոդվածին **հակասող**: **2.**«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով: **3.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ իրավական ակտի դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2021 թվականի հունիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:		

		119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասեր և 391-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը: **2.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետը հաշվարկման ենթակա է այդ ակտի հրապարակման պահից այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) օրենքով նախատեսված ժամկետում:	2 փետրվարի 2021 թվականի ՍԴՈ-1575	5 փետրվարի 2021թ.
		128-րդ հոդվածի 1-ին մաս և 134-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը: **2.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	24 նոյեմբերի 2020 թվականի ՍԴՈ-1561	26 նոյեմբերի 2020թ.
		182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ, 183-րդ հոդվածի 8-րդ մաս, 203-րդ հոդված	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը: **2.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 8-րդ մասը համապատասխանում	10 մարտի 2020 թվականի ՍԴՈ-1515	12 մարտի 2020թ.

			է Սահմանադրությանը: **3.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:		
		339-րդ հոդվածի 5-րդ մաս

			մեկնաբանությամբ:		
26.	**ՀՀ քաղաքացիական օրենսգիրք** ***(ընդունվել է 05.05.1998թ.)***	249-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը համապատասխանում է Սահմանադրությանը: **2.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ գրավ դրված գույքի՝ արտադատական կարգով բռնագանձման արդյունքում գրավառուին անցնող սեփականության իրավունքի պետական գրանցման համար անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմին պետք է ներկայացվի նաև գրավադրված գույքի վրա արտադատական կարգով բռնագանձում տարածելու վերաբերյալ գրավառուի հստակ կամահայտնությունն արտահայտող բռնագանձման ծանուցումը հանձնված լինելու հանգամանքը հաստատող փաստաթուղթը: **3.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետում տրված մեկնաբանությունից տարբերվող	15 նոյեմբերի 2022 թվականի ՍԴՈ-1668	18 նոյեմբերի 2022թ.

			մեկնաբանությամբ:		
		249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերություն	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի առաջին պարբերությունը համապատասխանում է Սահմանադրությանը:	15 նոյեմբերի 2022 թվականի ՍԴՈ-1668	18 նոյեմբերի 2022թ.
		251-րդ հոդվածի 1-ին մաս (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ)	**1**. Քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասը (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ գրավի առարկան ի սեփականություն ընդունելը համարվում է գրավի առարկայի բռնագանձման և իրացման ավարտ, և այդ պահի դրությամբ պետք է կատարվեն գրավատուի ու գրավառուի միջև փոխհաշվարկները: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասը (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման առաջին կետում տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:	9 մարտի 2021 թվականի ՍԴՈ-1583	12 մարտի 2021թ.
		317-րդ հոդվածի 2-րդ մաս և 337-րդ	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը և 337-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Սահմանադրությանը՝	28 սեպտեմբերի 2021 թվականի ՍԴՈ-1611	1 հոկտեմբերի 2021թ.

		հոդվածի 1-ին մաս	այն մեկնաբանմամբ, համաձայն որի՝ «պարտավոր էր իմանալ» կամ «պետք է իմացած լիներ» հասկացությունները վերաբերում են այն իրավիճակներին, երբ քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում անձը ողջամիտ ուշադրության դեպքում կիմանար իր իրավունքի ենթադրյալ խախտման մասին: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը և 337-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:		
		317-րդ հոդվածի 2-րդ մասի և 337-րդ հոդվածի 1-ին մաս	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը և 337-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում են Սահմանադրությանը՝ այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ այն դեպքում, երբ գործարքի վավերության վի-ճարկման հիմքը դատական ակտով թույլ տրված իրավունքի խախտումն է, ապա հայցային վաղեմության ժամկետի հաշվարկի սկիզբ է համարվում այդ իրավունքի խախտումը ճանաչելու մասին համապատասխան դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահը: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ	4 հուլիսի 2023 թվականի ՍԴՈ-1693	7 հուլիսի 2023թ.

			մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 317-րդ հոդվածի 2-րդ մասը և 337-րդ հոդվածի 1-ին մասը Դիմողի նկատմամբ կիրառվել են սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:		
		344-րդ հոդված	Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 344-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ հայցային վաղեմության բացառման ցանկում 1999 թվականի հունվարի 1-ից մինչև 2006 թվականի հոկտեմբերի 1-ը ժամանակահատվածում սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման իրավահարաբերություններից բխող վեճերում նախնական և համարժեք փոխհատուցման պահանջը չնախատեսելը չի հանդիսանում հայցային վաղեմության կիրառման հիմք, քանի որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 5-րդ մասի (սեփականության օտարման պահին գործող՝ 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրության 28-րդ հոդվածի 4-րդ նախադասության) հիման վրա՝ սեփականատիրոջ համաձայնության բացակայությամբ օտարված գույքի դիմաց նախնական և համարժեք փոխհատուցման պահանջների նկատմամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հայցային վաղեմության	7 նոյեմբերի 2023 թվականի ՍԴՈ-1699	10 նոյեմբերի 2023թ.

			ժամկետների վերաբերյալ դրույթները չեն տարածվում:		
		477-րդ հոդված	**1.** Քաղաքացիական օրենսգրքի 477-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ մինչև առուվաճառքի պայմանագրի կատարումը ծագած հիմքերով երրորդ անձանց կողմից գնորդից ապրանքն առգրավվելու դեպքը պետք է ներառի նաև ժամանակավոր առգրավման դեպքերը: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 477-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ:	10 մարտի 2020 թվականի ՍԴՈ-1514	12 մարտի 2020թ.
		1086-րդ հոդված	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:	30 նոյեմբերի 2021 թվականի ՍԴՈ-1618	3 դեկտեմբերի 2021թ.
		1087.2-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասեր	**1.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 7-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը: **2.** Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 8-րդ մասի «բացառիկ դեպքերում» բառակապակցությունը ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին,	3 մարտի 2020 թվականի ՍԴՈ-1513	6 մարտի 2020թ.

			78 և 79-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***:		
		1087.2-րդ հոդվածի 9-րդ մաս	**1.** Քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	16 հունիսի 2020 թվականի ՍԴՈ-1545	17 հունիսի 2020թ.
		1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ	**1.** ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ փաստացի տիրապետման կամ կառավարման, այդ թվում՝ իր հաշվին գույքը պահպանելու ծախսեր կատարելու միջոցով, ժառանգության ընդունման եղանակը կիրառելի է ինչպես ըստ օրենքի, այնպես էլ ըստ կտակի ժառանգության դեպքում: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:	12 հուլիսի 2022 թվականի ՍԴՈ-1660	15 հուլիսի 2022թ.
27.	**«ՀՀ քաղաքացիության մասին» օրենք** ***(ընդունվել է 06.11.1995թ.)***	Մինչև 08.12.2011թ. ՀՕ-319-Ն խմբագրությունը գործած 17-րդ հոդվածի 1-ին մաս	**1.**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի՝ մինչև 08.12.2011 թ. ՀՕ-319-Ն խմբագրությունը գործած 17-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	22 նոյեմբերի 2022 թվականի ՍԴՈ-1669	24 նոյեմբերի 2022թ.
28.	**ՀՀ քրեական դատավարության**	31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ	**1.**Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին	7 դեկտեմբերի 2021 թվականի	9 դեկտեմբերի 2021թ.

	օրենսգիրք ***(ընդունվել է 01.07.1998թ. ուժը կորցրած է ճանաչվել 01.07.2022 թ.)***	կետ	մասի 3-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը այն մեկնաբանությամբ, որ՝ ա) քննիչի, դատախազի, դատարանի՝ վարույթի կասեցման հայեցողական լիազորությունից չի բխում քրեական հետապնդման անձեռնմխելիությամբ պատգամավորին տրվող պաշտպանության հաղթահարման հարցով Ազգային ժողովին դիմելու իրավասու մարմնի՝ գլխավոր դատախազի հայեցողական լիազորությունը, բ) պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող պաշտպանությունը հաղթահարված չլինելու պարագայում քրեական վարույթը չկասեցնելը որևէ կերպ չի նշանակում (ենթադրում) վարույթն իրականացնող մարմնի լիազորություն՝ կատարելու գործողություններ (կայացնելու որոշումներ), որոնք ուղղակիորեն ներազդում են պատգամավորին անձեռնմխելիությամբ տրվող պաշտպանության վրա, գ) անազատության մեջ գտնվող պատգամավորի կարգավիճակ չունեցող անձը պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից, բացառությամբ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, չի կարող պահվել անազատության մեջ: Պատգամավորի կարգավիճակ ձեռք բերելու պահից անձը, բացառությամբ Սահմանադրության 96-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի, չի կարող զրկվել ազատությունից այլ կերպ, քան Ազգային ժողովի համաձայնությամբ:	ՍԴՈ-1619	
		295-րդ հոդվածի 1-ին մասի	**2**.Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 295-րդ հոդվածի 1-		

		երկրորդ պարբերություն	ին մասի 2-րդ պարբերությունը համապատասխանում է Սահմանադրությանը:		
		35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետ	**1.** 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ «նոր ի հայտ եկած հանգամանքների կապակցությամբ գործը վերսկսելու համար» ձևակերպումը վերաբերում է նաև քաղաքացիական դատավարության կարգով նոր երևան եկած հանգամանքով օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայմանը: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:	23 հունվարի 2024 թվականի ՍԴՈ-1712	26 հունվարի 2024թ.
		93-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 93-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	1 դեկտեմբերի 2020 թվականի ՍԴՈ-1564	3 դեկտեմբերի 2020թ.
		185-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին	**1.** ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը	9 մարտի 2021 թվականի ՍԴՈ-1584	12 մարտի 2021թ.

		նախադասություն	համապատասխանում է Սահմանադրությանը:		
		284-րդ հոդվածի 6-րդ մաս **<u>ՀԱՓ</u>** 287-289-րդ հոդվածներ, 385-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ նախադասությունը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դատարանի կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին վերադարձնելը չպետք է խոչընդոտի այդ նյութերը վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձին և վերաքննիչ դատարանին տրամադրելուն՝ միաժամանակ ապահովելով պետական, ծառայողական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքի պահպանումը: **2.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 287-288-րդ հոդվածներն այն մասով, որով դրանցով նախատեսված կանոնները կիրառելի են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն տալու մասին դատարանի որոշումների բողոքարկման և ստուգման նկատմամբ, համապատասխանում են Սահմանադրությանը: **3.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 2-րդ մասը և 289-րդ հոդվածը համապատասխանում են Սահմանադրությանը:	28 ապրիլի 2020 թվականի ՍԴՈ-1526	30 ապրիլի 2020թ.
		290-րդ հոդվածի 1-ին	**1.** 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ	30 մայիսի 2023 թվականի	1 հունիսի 2023թ.

		մաս	հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որի համաձայն՝ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցն ընտրելու մասին վարույթն իրականացնող մարմնի որոշումն օրենքով սահմանված կարգով ենթակա է բողոքարկման դատարան: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:	ՍԴՈ-1690	
		397-րդ հոդվածի 2-րդ մաս	**1**. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 397-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված իրավակարգավորումը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ նշված դրույթով նախատեսված լիազորությունն իրականացնելիս վերաքննիչ դատարանը պետք է ապահովի անձի՝ մեղադրանքից պաշտպանվելու իրավունքի արդյունավետ իրացման իրավական հնարավորություն:	17 նոյեմբերի 2020 թվականի ՍԴՈ-1559	20 նոյեմբերի 2020թ.

29.	**ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք** ***(ընդունվել է 30.06.2021թ.)***	398-րդ հոդվածի 3-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ Վճռաբեկ դատարանի՝ հատուկ վերանայման բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը՝ դրա հիմքում դրված եզրահանգման հետ մեկտեղ, պետք է պարունակի նաև դրան հանգեցրած պատճառաբանությունը: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի 3-րդ մասը Դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշմամբ տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:	19 դեկտեմբերի 2023 թվականի ՍԴՈ-1707	22 դեկտեմբերի 2023թ.
		401-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 401-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով չի նախատեսում Սահմանադրական դատարանի որոշման՝ որպես նոր հանգամանքի հիմքով անձի նկատմամբ կայացված՝ խափանման միջոցի կիրառման վերաբերյալ վերջնական դատական ակտը վերանայելու հնարավորություն, ճանաչել Սահմանադրության 40, 61 և 75-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր:***	4 հունիսի 2024 թվականի ՍԴՈ-1736	7 հունիսի 2024 թ.
30.	**ՀՀ քրեական օրենսգիրք** ***(ընդունվել է***	137.1-ին հոդված	**1.**Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:	29 ապրիլի 2022 թվականի ՍԴՈ-1646	2 մայիսի 2022թ.

	18.04.2003թ.)	300.1-ին հոդված	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածը ճանաչել Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր:***	26 մարտի 2021 թվականի ՍԴՈ-1586	29 մարտի 2021թ.
		353.1-ին հոդված **ՀԱՓ** «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետեր	**1.** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 353.1-ին հոդվածը և «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետը համապատասխանում են Սահմանադրությանը: **2.** «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դրանով նախատեսված սահմանափակումներն ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ կարող են կիրառվել միայն այն դեպքում, երբ հաշվի են առնվել նրա բնակության համար անհրաժեշտ այլ վայրի մատչելիությունը, ինչպես նաև ընտանիքում բռնության ենթարկված անձին և նրա խնամքի տակ գտնվող անձանց անվտանգ այլ վայր տեղափոխելու հնարավորությունը և նպատակահարմարությունը:	14 ապրիլի 2020 թվականի ՍԴՈ-1522	16 ապրիլի 2020թ.
31.	**«ՀՀ քրեական դատավարության**	1-ին հոդվածի 2-րդ կետ	**1.** Ազգային ժողովի կողմից 2020 թվականի հունվարի 22-ին ընդունված՝ «Հայաստանի	18 հունիսի 2020 թվականի	22 հունիսի 2020թ.

	օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենք ***(ընդունվել է 22.01.2020թ.)***		Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետը ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 75, 78 և 79-րդ հոդվածներին ***հակասող:***	ՍԴՈ-1546	
32.	**«Հոգեբուժական օգնության մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է 25.05.2004թ.)***	6-րդ հոդվածի 10-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 15 և 16-րդ հոդվածների, 19-րդ հոդվածի 2, 3 և 4-րդ մասերի, 22-րդ հոդվածի 1-ին մասի, նույն օրենքի հավելվածի 6-րդ բաժնի 4-րդ կետի 2-րդ պարբերություն	**2.** «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ մասն այնքանով, որքանով պատշաճորեն չի ապահովում հոգեկան խանգարում ունեցող երեխայի՝ հոգեկան անձեռնմխելիության հիմնական իրավունքը, երբ երեխայի տարիքը և հոգեկան խանգարման բնույթը թույլ են տալիս, որ վերջինս արտահայտի իր կամքը և գիտակցի իր նկատմամբ կատարվող բժշկական միջամտության բնույթը և հետևանքները, ճանաչել Սահմանադրության 25-րդ և 37-րդ հոդվածներին ***հակասող*:** **5.**«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 15 և 16-րդ հոդվածները, 19-րդ հոդվածի 2, 3 և 4-րդ մասերը, 22-րդ հոդվածի 1-ին մասը և հիշյալ օրենքի հավելվածի 6-րդ բաժնի 4-րդ կետի երկրորդ պարբերությունը **համապատասխանում են** Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ հոգեկան խանգարումով անձին բժշկական միջամտության ենթարկելու գործընթացի շրջանակներում անձի համաձայնությունն ստանալը պետք է լինի նախապատվելի: **6.** Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ	30 հունվարի 2020 թվականի ՍԴՈ-1504	1 փետրվարի 2020թ.

			հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման հրապարակման պահին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը, 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ մասը և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը Սահմանադրությանը ***հակասող և անվավեր*** ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության և հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին վիճարկվող դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման այնպիսի բաց, որը խոչընդոտ կդառնա անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց բժշկական օգնության և սպասարկման համար, սույն որոշմամբ Սահմանադրությանը ***հակասող*** ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի հունիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Հոգեբուժական օգնության մասին» և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների վերաբերելի		

			իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:		
33.	**«Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին կանոնները հաստատելու մասին» ՀՀ Կառավարության թիվ 579 որոշում** ***(ընդունվել է 15.11.1992թ.)***		**3.** ՀՀ կառավարության 1992 թվականի նոյեմբերի 15-ի «Ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների (անկախ սեփականության ձևից) աշխատողներին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման կարգի մասին կանոնները հաստատելու մասին» թիվ 579 որոշմամբ ամրագրված իրավակարգավորումները համապատասխանում են Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ մինչև ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 22-ի թիվ 1094-Ն որոշմամբ կատարված փոփոխությունն ուժի մեջ մտնելը աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնաս կրած անձինք կազմակերպության գործունեության դադարեցման դեպքում կապիտալացված միջոցների բացակայության կամ անբավարար լինելու պարագայում պահպանում են պետական բյուջեի հաշվին փոխհատուցում ստանալու իրավունքը:	30 նոյեմբերի 2021 թվականի ՍԴՈ-1618	3 դեկտեմբերի 2021թ.
34.	**«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք**	39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ	**1.**«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ ոստիկանության ծառայողի համար ինքնին որևէ կրոնական կազմակերպությանն անդամակցելու և	18 փետրվարի 2020 թվականի ՍԴՈ-1506	21 փետրվարի 2020թ.

	(ընդունվել է 03.07.2002թ.)		անդամակցության համար վարքագծի կոնկրետ դրսևորումներով չպայմանավորված բացարձակ արգելք սահմանելու մասով, ճանաչել Սահմանադրության 41-րդ հոդվածին և 45-րդ հոդվածին ***<u>հակասող և անվավեր</u>***:		
		39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ	**4.** «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով ամրագրված կարգավորումը՝ ոստիկանության ծառայողի՝ արհեստակցական կազմակերպության անդամ լինելու բացարձակ արգելքի մասով, ճանաչել Սահմանադրության 45-րդ, 75-րդ, 80-րդ և 81-րդ հոդվածներին **հակասող**: **7.** Հաշվի առնելով իրավական անվտանգությունը չխաթարելու անհրաժեշտությունը՝ Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասին, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետին և 19-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրական դատարանի սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների իրավական ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2023 թվականի նոյեմբերի 11-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Արհեստակցական	11 ապրիլի 2023 թվականի ՍԴՈ- 1683	14 ապրիլի 2023թ.

			միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշմանը:		
		43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերություն	**1.** «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերությունը՝ ոստիկանության ծառայողի նկատմամբ բացառապես քրեական հետապնդում հարուցելու (իրականացնելու) փաստով պայմանավորված՝ լիազորությունները կասեցնելու, ինչպես նաև ոստիկանության ծառայողի աշխատավարձի վճարման ժամկետային սահմանափակում նախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 29, 49, 66, 78 և 79-րդ հոդվածներին ***հակասող և անվավեր***:	25 փետրվարի 2020 թվականի ՍԴՈ-1507	27 փետրվարի 2020թ.
35.	**«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է 04.02.2014թ.)***	9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ	**1.**«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանը:	29 հունիսի 2021 թվականի ՍԴՈ-1605	01 հուլիսի 2021թ.
		9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետ	«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը համապատասխանում է Սահմանադրությանը:	9 նոյեմբերի 2021 թվականի ՍԴՈ-1617	12 նոյեմբերի 2021թ.
36.	**«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է***	41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ՝ դատավորի մասով	**1**.«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ դատավորի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:	2 մարտի 2021 թվականի ՍԴՈ-1580	4 մարտի 2021թ.

	22.12.2010թ.)				
37.	**«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք** *(ընդունվել է 27.12.1997թ.)*	9-րդ և 9.1-ին հոդվածներ	**1.** «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 9.1-ին հոդվածները համապատասխանում են Սահմանադրությանը:	1 հուլիսի 2022 թվականի ՍԴՈ-1655	4 հուլիսի 2022թ.
		9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետ	**1.** «Պետական տուրքի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի «ա» ենթակետը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դրանով սահմանված կարգավորումը չի տարածվում առաջին ատյանի դատարանի՝ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտի բողոքարկման արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված դատական ակտի վճռաբեկության կարգով բողոքարկման իրավունքի իրացման վրա: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:	23 ապրիլի 2024 թվականի ՍԴՈ-1726	26 ապրիլի 2024թ.
38.	**«Սահմանադրա-կան դատարանի մասին» ՀՀ օրենք** *(ընդունվել է 17.01.2018թ.)*	69-րդ հոդվածի 11-րդ մաս	**1.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 11-րդ մասն այն մասով, որ չի նախատեսում այն անձանց նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերի՝ նոր հանգամանքի հիմքով վերանայում, որոնք դատական պաշտպանության միջոցներն սպառել են Սահմանադրական դատարանում այլ անձի դիմումը մուտքագրվելուց հետո, սակայն նրանց նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության հարցի վերաբերյալ այլ	29 մարտի 2022 թվականի ՍԴՈ-1645	30 մարտի 2022թ.

			անձի դիմումի հիման վրա Սահմանադրական դատարանում գործի դատաքննություն սկսելու օրվա կամ այդ հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման օրվա դրությամբ լրացած չի եղել նրանց կողմից Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու համար սահմանված վեցամսյա ժամկետը, ճանաչել Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներին **հակասող և անվավեր:**		
		62-րդ հոդվածի 9-րդ մաս	«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 9-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	15 մարտի 2022 թվականի ՍԴՈ-1639	17 մարտի 2022թ.
39.	**«Սնանկության մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է 25.12.2006թ.)***	20.1-ին հոդված	**1.**«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:	23 սեպտեմբերի 2021 թվականի ՍԴՈ-1610	27 սեպտեմբերի 2021թ.
		29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետ	**2.** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:	26 հունվարի 2021 թվականի ՍԴՈ-1572	29 հունվարի 2021թ.
		47-րդ հոդվածի 2-րդ մաս	**1.**«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները համապատասխանում են Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դրանք արգելք չեն հանդիսանում պարտապանի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման համար: **2.** «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված	26 մայիսի 2020 թվականի ՍԴՈ-1542	27 մայիսի 2020թ.

			վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ օրենքով սահմանված կարգով, քանի որ «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ մասը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման առաջին կետում տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:		
		80-րդ հոդված	**1.** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 80-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:	14 սեպտեմբերի 2021 թվականի ՍԴՈ-1609	16 սեպտեմբերի 2021թ.
40.	**Վարչական իրավախախ-տումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք** ***(ընդունվել է 06.12.1985թ.)***	182.5-րդ հոդվածի 5-7-րդ մասեր **<u>ՀԱՓ</u>** 13-րդ և 14-րդ մասեր	**3.**Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 182.5-րդ հոդվածի 5-7-րդ մասերը, դրանց հետ փոխկապակցված 13-րդ և 14-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:	4 մայիսի 2021 թվականի ՍԴՈ-1592	7 մայիսի 2021թ.
		223-րդ հոդված	**1.** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 29-րդ գլուխը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 223-րդ հոդվածը համապատախանում են Սահմանադրությանը:	23 փետրվարի 2021 թվականի ՍԴՈ-1578	25 փետրվարի 2021թ.
		287-րդ հոդվածի 2-րդ մաս	**2**. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 287-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	31 մայիսի 2022 թվականի ՍԴՈ-1654	3 հունիսի 2022թ.
41.	**«Տեղական հանրաքվեի մասին»**	4-րդ հոդվածի 1.1-ին մաս, 6-րդ հոդվածի	**1.** «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1.1-ին մասը, 6-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով,	14 մայիսի 2021 թվականի ՍԴՈ-1593	17 մայիսի 2021թ.

	ՀՀ օրենք *(ընդունվել է 13.06.2018թ.)*	2-րդ մաս և 8-րդ հոդվածի 1-ին մաս	որքանով չեն ապահովում համայնքների միավորման կամ բաժանման հարցի վերաբերյալ համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին **<u>հակասող և անվավեր:</u>** **2.** «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասը՝ նույն օրենքի 7.1-ին հոդվածով սահմանված կարգով նախաձեռնող խմբի լիազոր ներկայացուցչի կողմից տեղական հանրաքվեի դրվող հարցն ստանալուց հետո տեղական հանրաքվեի նշանակումն անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության հիմքով համայնքի ղեկավարի կողմից մերժման ենթակա լինելու մասով, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին **<u>հակասող և անվավեր:</u>** **3.** «Տեղական հանրաքվեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի հետ համակարգային առումով փոխկապակցված նույն օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասը՝ համայնքի բյուջեում համայնքների միավորման կամ բաժանման հարցով տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ այդ միջոցների անբավարարության դեպքում համապատասխան		

			ծախսերը պետական բյուջեի միջոցների հաշվին կատարելը չնախատեսելու մասով, ճանաչել Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասին և 190-րդ հոդվածին **<u>հակասող և անվավեր:</u>**		
42.	**«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենք** ***(ընդունվել է 17.06.2008թ.)***	16-րդ հոդվածի 1-ին մաս	**2.** «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:	8 դեկտեմբերի 2020 թվականի ՍԴՈ-1571	11 դեկտեմբերի 2020թ.